

**ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ**  
**ՆՈՒԻՐՈՒԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ**  
**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՄԱՐԱՆԵԱՆԻ**  
**"TURKEY HAS RECOGNIZED THE ARMENIAN GEOCIDE" ՀԱՏՈՐԻ**

Առաջնորդ Սրբազան Հոր բարձր հովանաւորութեամբ, Չորեքշաբթի, Ապրիլ 14ի երեկոյեան ժամը 7:00ին, Առաջնորդարանի Արմէն եւ Կլորիա Համբար վերանորոգուած Դահլիճին մէջ, տեղի ունեցաւ Յուշ Երեկոյ մը՝ նուիրուած Հայկական Ցեղասպանութեան 95րդ Տարելիցին եւ այս առիթով Դոկտ. Յովհաննէս Ահմարանեան հանգամանօրէն ներկայացուց իր պատրաստած "Turkey Has Recognized the Armenian Genocide" հատորը:

Օրուան հանդիսավարն էր Առաջնորդարանի Դիւանապետ՝ Արժ. Տ. Սիփան Աւագ Քինյ. Մխսեան, որ բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ անոնց փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հոր օրհնութիւններն ու սիրալիր ողջոյնները: Սրբազան Հայրը մեկնած էր Սագրամէնթօ, Հինգշաբթի, Ապրիլ 15ի առաւօտեան ժամը 9:30ին Բացման Աղօթքը կատարելու Գալիֆորնիա Նահանգի Ծերակոյտին: Ապա հակիրճ կերպով իր խորհրդածութիւնը յայտնեց բովանդակալից գիրքերու մասին, որոնք մնայուն արժէք կը ներկայացնեն: Ապա ներկայացուց Դոկտ. Յովհաննէս Ահմարեանեանը իր հետեւեալ կենսագրական ընդհանուր գիծերով:-

*Դոկտ. Յովհաննէս Ահմարանեան 1980ին փիլիսոփայութեան դոկտորան ստացած է Գահիրէի Համալսարանէն: Իսկ 2005 թուականին հայագիտական ուսմանց դոկտորան՝ Երեւանի Համալսարանէն: Ան Կը տիրապետէ Հայերէն, Արաբերէն, Ֆրանսերէն, Իտալերէն եւ Անգլերէն լեզուներուն:*

*Եղած է հարիւրաւոր օտար լեզուներով պատրաստուած ֆիլմերու թարգմանիչ, Արաբական թերթերու թղթակից, Վատիկանի ծայնասփիւռի հաղորդիչ եւ Հայերէն թերթերու թղթակից:*

*Հայկական վարժարաններէն ներս եղած է հայերէն լեզուի ուսուցիչ: Արաբերէն լեզուն ու մշակոյթը աւանդած է Իրաք մեկնող բանակայիններուն:*

*Արժանացած է Եգիպտոսի հանգուցեալ Նախագահ՝ Անուար Սատաթի անուամբ շքանշանի եւ հրապարակագրութեան բնագաւառին մէջ այլ մետալներու:*

*Ընտրուած է տարուան թղթակիցը եւ տարուան ուսուցիչը: Ունի բազմաթիւ ուսումնասիրութիւններ, որոնք հրատարակուած են առանձին հատորներով:*

Դոկտ. Ահմարանեան իր պատրաստած նորատիպ գիրքին մասին մանրամասն տեղեկութիւններ հաղորդեց եւ պաստարի վրայ ցոյց տուաւ Հայկական Ցեղասպանութեան վերաբերեալ թրքական թերթերու, պատմաբաններու, պետական պաշտօնեաներու եւ ոչ թուրքերու փաստաթուղթերուն պատճէնները եւ երբեմն մեկնաբանութիւններ ալ ընելով: Ներկայացուած բոլոր տուեալները, որոնք օրը օրին գրուած են, ինքնին կ'արդարացնէ իր հեղինակած գիրքին վերնագիրը, թէ "TURKEY HAS RECOGNIZED THE ARMENIAN GEOCIDE": Ներկաները չափազանց գոհ մնացին Դոկտ. Ահմարանեանի խանդավառ ներկայացումէն եւ հայթայթած անուրանալի իրականութենէն, որուն մասին տարիներէ ի վեր Հայ ժողովուրդը համայն աշխարհին կը յայտարարէ, թէ Հայկական Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութեան կողմէ նախածրագրուած եւ գործադրուած էր:

Հանդիսավարը ծանօթացուց Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Դպրապետուհի՝ Մաննիկ Մանուկեանը, որ իր գեղեցիկ ձայնով եւ խոր զգացումով երգեց «Տէր, Ողորմեա» եւ «Տէր-կեցո՛ղու գ՜հայս»: Ապա հրաւիրեց Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանը, որ ոգեւորիչ կերպով եւ պատշաճ մէջբերումներով ներկայացուց Դոկտ. Ահմարանեանին վերոյիշեալ գիրքը եւ թելադրեց, որ գիրքէն օրինակներ դրկուին Թուրք Կառավարութեան պաշտօնատարներուն, Ամերիկեան եւ Եւրոպական դիւանագէտներուն, ինչպէս նաեւ ուր որ անհրաժեշտ է, որպէսզի կարդան թուրքերու իսկ կողմէ գրուած վկայութիւնները եւ ընդունելու գործադրուած ցեղասպանութիւնը:

Ապա հանդիսավարը առիթ տուաւ, որ հանդիսականները իրենց հարցումները ուղղէին Դոկտ. Ահմարանեանին: Տրուած հարցումներուն գոհացուցիչ պատասխաններ տուաւ հեղինակը:

Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան կատարեց փակման խօսքը, Առաջնորդ Սրբազան Հոր անունով շնորհաւորեց եւ գնահատեց Դոկտ. Ահմարանեանին պատրաստած եւ հրատարակած գիրքը եւ անոր նուիրեց Երջանկայիշատակ Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հեղինակած եւ Գանատա տպուած գիրքերէն: Հայր Սուրբը շնորհակալութիւն յայտնեց յայտագրի բոլոր մաս կազմողներուն:

Յուշ Երեկոյին ներկայ էր նաեւ Պատուելի Խաչիկ Շահինեան, որ իր ողջոյնի եւ գնահատութեան խօսքը ուղղեց եւ յայտնեց, թէ գիրքէն օրինակներ պիտի ղրկուէին զանազան անձնաւորութիւններու եւ պետական դէմքերու: Դոկտ. Ահմարանեանի հեղինակած այս գիրքին ակնարկելով ըսաւ. «Այս գիրքը յառաջ պիտի տանի մեր Ցեղասպանութեան ճանաչումը»: Դոկտ. Ահմարանեան իր խորին երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Զօր, որ միշտ կը քաջալերէ զինք եւ զօրավիգ կը կանգնի իր գրական գործերուն: Ապա յատուկ շնորհակալութիւն յայտնեց գիրքի պատրաստութեան եւ տպագրութեան իրեն մեծապէս օգտակար հանդիսացող անհատներուն: Յայտագրի աւարտին գիրքէն օրինակներ փափաքողներուն համար սիրով մակագրեց Դոկտ. Ահմարանեան, որուն յաջորդեց հիւրասիրութիւնը: